Հավելված 2

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«03» _____ 2018թ.

Կ.Տ.

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ուսանողների օբյեկտիվ և ճշգրիտ գնահատման համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր մասն է: Գնահատումը միջոց է՝ հավաստելու ուսանողների առաջադիմությունը, յուրացրած գիտելիքի մակարդակը, ստացված վերջնարդյունքը և դրա համապատասխանությունը կրթական նպատակներին և խնդիրներին: Գնահատումը՝

- Թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները:
- Տրամադրում է դասախոսներին և տնօրենությանը լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին:
- Տրամադրում է ծնողներին հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին:
- Հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:
- Պետք է լինի պլանավորված, անաչառ, հուսալի, թափանցիկ:

1. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

1.1 Ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգումն իրականացվում է կիսամյակի ընթացքում և արձանագրվում կիսամյակի վերջում, իսկ վերջնական ստուգումը՝ կիսամյակի վերջում հատուկ սահմանված ժամկետներում:

1.2 Գիտելիքների ընթացիկ ստուգումն իրականացվում է բանավոր հարցումների, թեստային առաջադրանքների, ինքնուրույն աշխատանքների միջոցով:

1.3 Գիտելիքների վերջնական ստուգումն իրականացվում է ստուգարքների և քննությունների միջոցով:

1.4 Գիտելիքների ստուգման ձևի ընտրությունը կախված է տվյալ առարկայի կամ մոդուլի առանձնահատկությունից:

1.5 Քննությունների ժամանակացույցը կազմվում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից:

1.6 Քննությունների համար տվյալ մասնագիտական խմբի կողմից մշակվում են հարցաշար, հարցատոմսեր, որոնք վավերացվում են ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից:

1.7 Գրավոր քննությունների ժամանակ ուսանողներին տրամադրվում են առաջադրանքների թերթիկներ, որոնք նախապես կնիքվում են հաստատության կնիքով:
1.8 Մինչև քննաշրջանը ուսանողները պետք է մարեն առարկայական պարտքերը:
1.9 Պետական ավարտական քննությունները անցկացվում են համաձայն ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի:

2. ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Գնահատումն իրականացվում է միավորային և որակական եղանակով:
2.2 Ընթացիկ գնահատումները գրացվում են դասամատյանում:
2.3 Տարբերակված ստուգարքների և քննությունների գնահատումը գրանցվում է քննական տեղեկագրերում:
2.4 Տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից կազմված տեղեկագրերը վավերացնում է հիմնադրամի տնօրենը: Քննական տեղեկագրերը դասախոսին տրամադրվում են քննությունից անմիջապես առաջ և վերադարձվում են քննությունից անմիջապես հետո:
2.5 Մոդուլի որակական գնահատումը իրականացվում է մոդուլի յուրացման ամփոփ թերթիկում՝ կատարելով «անցել է», «չի անցել» գրանցումը:
2.6 Գնահատումը կատարվում է 10 միավորանոց համակարգով՝
«10» - բացառիկ
«9» - գերազանց
«8» – շատ լավ
«7» – լավ
«6» – միջինից բարձր
«5» – միջին
«4» – բավարար
«3» – անբավարար
«2» – վատ
«1» – շատ վատ
«Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից պետական ամփոփիչ ստուգման գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

2.7 Գերազանցության դիպլոմ շնորհվում է համաձայն պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման կարգի:
2.8 Տարբերակված ստուգարքը կամ քննությունը անբավարար հանձնելու դեպքում ուսանողը իրավունք ունի վերահանձնել դրանք ոչ ավել, քան 2 անգամ:
2.9 Տարբերակված ստուգարքին կամ քննությանը հարգելի բացակայած ուսանողն իրավունք ունի վերահանձնել համաձայն վերահանձնման ժամանակացույցի:
2.10 Ուսանողին կիսամյակի ընթացքում թույլատրվում է վերահանձնել ոչ ավել, քան 2 ընթացիկ քննություն 2 լուծարմամբ: Վերոնշյալ լուծարումները չհաղթահարելու պարագայում անբավարար գնահատված ուսանողը պետք է կրկնի
տվյալ կիսամյակի դասընթացն ամբողջությամբ:
2.11 Եթե ուսանողը վերահանձնման ենթակա քննական առարկաներից բացի ունի նաև անբավարար նիշ տարբերակված ստուգարքից կամ տարբերակված ստուգարքներից, ապա տվյալ ուսանողի վերահանձնման թույլտվությունը քննարկվում է մանկավարժական խորհրդում:
2.12 Եթե ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման պահին տվյալ մասնագիտության ուսումնական ծրագիրը փոփոխության է ենթարկվել, ապա վերականգնումը թույլատրվում է միայն ակադեմիական տարբերությունների հանձնումից հետո:

3. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

3.1 Քննություններից առաջ դասախոսն ուսանողներին պարտավոր է ծանոթացնել գնահատման և բողոքարկման կարգին:
3.2 Ուսանողն իր գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում կարող է բողոքարկել այն:
3.3 Գրավոր քննության դեպքում ուսանողը պետք է բողոքարկի գրավոր ձևով՝ դիմելով ուսումնական մաս ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելու օրվան հաջորդող 24 ժամվա ընթացքում:
3.4 Տնօրենի հրամանով կազմվում է բողոքարկման հանձնաժողով:
3.5 Բողոք ներկայացրած ուսանողը ծանուցվում է բողոքարկման հանձնաժողովի որոշման մասին որոշումը ընդունելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:
3.6 Բողոքարկման արդյունքների հիման վրա կազմվում է բողոքարկման հանձնաժողովի արձանագրություն:
3.7 Բանավոր քննության դեպքում բողոքարկումը իրականացվում է անմիջապես քննասենյակում:

3.8 Ուսանողն իրավունք ունի քննասենյակ հրավիրել տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալին գնահատման վերաբերյալ բողոքարկում ներկայացնելու համար:
3.9 Նորից իրականացվում է ուսանողի գիտելիքների ստուգում և գնահատում: Արդյունքում գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ մնալ նույնը:
3.10 Բողոքարկումից հետո նշանակված գնահատականը վերջնական է:

Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հիմնադրամի տնօրենի հաստատման պահից:

Հավելված N1

«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION « CENTRE D'ENSEIGNEMENT PROFESSIONNEL FRANCO-ARMENIEN »

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

Բողոքարկող ուսանող	
Կուրսը	
Քննական առարկան	
Քննության ամսաթիվը	
Ստացած միավորը	
Կանխատեսված միավորը	
Բողոքարկման պատճառը	

Դիմումն ընդունեց՝ _____
(անուն, ազգանուն)

_____
(ստորագրություն)

Դիմումի ընդունման ամսաթիվ՝ _____

Տիգրան Մեծի 38, Երևան 0005, Հայաստանի Հանրապետություն Հեռ. +374-10-578533; Ֆաքս +374-10-578534;
38 rue Tigran Mets, Erevan 0005, République d'Arménie Tel:+374-10-578533; Fax:+374-10-578534;
E-mail info@fcepfa.am

Հավելված N2

Հաստատում եմ բողոքարկող հանձնաժողովի նախագահ՝

Հիմնադրամի տնօրեն _____

(ստորագրություն), Կ.Տ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քննությունների արդյունքների բողոքարկման

«_____» _____ 20 թ.

Երևանի «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամ

_____ _____

առարկան քննության տեսակը (գրավոր կամ բանավոր)

Քննության ամսաթիվը՝ _____ Բողոքարկման ամսաթիվը՝ _____

համար	Բողոքարկող ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Քննական թեստի համարը	Բողոքարկումից առաջ		Բողոքարկումից հետո		Ծանոթություն
			Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը	
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
11							
12							
13							

Բողոքարկման հանձնաժողովի նախագահ՝ _____ _____

ստորագրություն անունը, ազգանունը, , հայրանունը

Հանձնաժողովի անդամներ՝ _____ _____

ստորագրություն անունը, ազգանունը, , հայրանունը

_____ _____

ստորագրություն անունը, ազգանունը, հայրանունը,

Հավելված 3

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1 միավոր (շատ վատ)՝ չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:

2 միավոր (վատ)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:

3 միավոր (անբավարար)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:

4 միավոր (բավարար)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

5 միավոր (միջին)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

6 միավոր (միջինից բարձր)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

7 միավոր (լավ)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

8 միավոր (շատ լավ)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է

ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:

9 միավոր (գերազանց)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկությունը:

10 միավոր (բացառիկ)՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկությունը: